Արձանագրություն N 4
ՀՀ ՈԿ ԳՀԱՊՁԲ-22/2 ծածկագրով գնանշման հարցման
Գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 15 փետրվարի 2022թ
ժամը 14:30

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Հ. Մարգարյանը
անդամներ՝ Գ. Մխիթարյանը, Ե.Ասլանյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

I. Մասնակիցների հետ գների նվազեցման բանակցություններ վարելու մասին

(Հ. Մարգարյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

Սահմանված ժամկետում և հրավերի պահանջների համաձայն առաջարկված գների նվազեցման վերաբերյալ բանակցությունների համար հրավիրված հանձնաժողովի նիստին չէր ներկայացել «Բի էֆ Բի» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

2. Ընդունելով ի գիտություն, որ մասնակիցը չէր ներկայացել գների նվազեցման համար հրավիրված բանակցությունների նիստին և 1-ին, 4-րդ, 5-րդ, 6-րդ չափաբաժինների համար առաջարկած գները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա/ մերժել «Բի էֆ Բի» ՍՊԸ-ի հայտը 1-ին, 4-րդ, 5-րդ, 6-րդ չափաբաժինների համար՝ հայտը հրավերով սահմանված պայմաններին չհամապատասխանելու հիմնավորմամբ՝ առաջարկված գները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

բ/ 1-ին, 4-րդ, 5-րդ, 6-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն հետևյալ հիմնավորմամբ՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

II. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների ամփոփման մասին

(Հ. Մարգարյան)

3. Ներկայացված գնային առաջարկների և գնահատման արդյունքների հիման վրա հանձնաժողովը որոշեց.

ա/ «Մեգաօֆիս» ՍՊԸ -ին ընտրված մասնակից ճանաչել՝ 3-րդ չափաբաժնի համար:

Ընտրված մասնակից է ճանաչվել որպես բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից, նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

III. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(Հ. Մարգարյան)

4. Հանձնաժողովը որոշեց.

ա/ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել և նրա հետ կնքել պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և հրավերով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Հ.Մարգարյան

անդամներ՝ _____ Գ. Մխիթարյան

_____ Ե. Ասլանյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան